



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«21» Օգոստոսի 2018 թ.

№ 513-Ղ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի
N342-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 6-ի «Մաքսային գործառնությունների իրականացման վայրերը սահմանելու մասին» N342-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետում «ապրանքները» բառը փոխարինել «ապրանքների» բառով,


2) հրամանի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Կախված ապրանքների և տրանսպորտային միջոցների պահեստավորման, տեղափոխման, բեռնման, բեռնաթափման առանձնահատկություններից՝ վերադաս

մաքսային մարմնի ղեկավարի հրամանով կարող են սահմանվել զննման և հաշվառման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման այլ վայրեր:»,

3) հրամանի 8-րդ կետում «շահագրգիռ» բառից առաջ հանել «ապա» բառը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

